



Չարմանագան 2018

Արձանագրութիւնները սկսած են:

«Չարմանագան» արեւմտահայերէնով ամառնային նորարար ծրագիրը 2018-ին տեղի պիտի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներու շրջանը, Յուլիս 15-էն մինչեւ Օգոստոս 9: Բաղկացած պիտի ըլլայ միեւնոյն ժամանակ երեք նախաձեռնութիւններէ:

- 10-էն 15 տարեկան պատանիներու համար նախատեսուած ճամբար մը,
- Խտացեալ համալսարանական ծրագիր մը, ուղղուած Սփիւռքի արեւմտահայերէնի ուսուցիչներուն, ու վաւերացուած Փարիզի *Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնակին (Ինստիտյիս)* կողմէ,
- 16-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ստեղծագործական յայտագիր մը, որ պիտի սկսի Յուլիս 12-ին եւ պիտի տեւէ մինչեւ Օգոստոս 9:

Պատանիները եւ երիտասարդները իրենց տարիքին համաձայն զանազան աշխատանոցներու պիտի մասնակցին, ինչպէս՝ երաժշտական, թատերական եւ պարային աշխատանոցներ, գեղարուեստի, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, բանավեճեր եւ բազմազան խաղեր ու մարզանքներ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ յարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ արեւմտահայերէնը, մասնագէտ ու տաղանդաւոր ուղեկիցներու ղեկավարութեամբ:

«Չարմանագան»ը բաց է Սփիւռքի պատանիներուն եւ երիտասարդներուն:

Տրամադրելի տեղերու թիւը սահմանափակ է. 10-էն 15 տարեկան մասնակիցներու պարագային՝ 40, 16-էն 24 տարեկան մասնակիցներուն համար՝ 30 հոգի:



Նկատի պէտք է ունենալ նաեւ հետեւեալ պարագան. երիտասարդներու խումբին մասնակիցները անհրաժեշտ է որ գիտնան առնուազն միջին մակարդակով հայերէն մը:

Իսկ համալսարանական խտացեալ ծրագիրը, զոր պիտի վարեն մասնագետ դասատուներ, 15 ուսուցիչ միայն կ'ընդունի: Ծրագիրը կ'առաջարկէ մանկավարժական այժմեական մօտեցումներու եւ առարկաներու վրայ հիմնուած դասախօսութիւններ եւ խմբային աշխատանքներ:

Արձանագրութեան եւ յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք <http://www.zarmanazan.com> կայքէջը:

Արձանագրութիւնները պէտք է կատարուած ըլլան մինչեւ 22 Յունուար 2018, Կրիստոսի ժամով ժամը 23:00-ը:

Բոլոր արձանագրողներուն հետ կապ պիտի հաստատենք մինչեւ 30 Յունուար 2018-ը:

Անցեալ տարուան ճամբարին մասին գաղափար կազմելու համար դիտեցէ՛ք [2017 Zarmanazan video](#) տեսերիզը, հետեւեալ հասցէին վրայ.

*«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական բաժանմունքը 2017-ին ձեռնարկեց «Չարմանագան» մանկավարժական յայտագիրին, որպէս արեւմտահայերէնի վերաշխուժացման ծրագրի մէկ բաժինը: Ան կազմակերպուած է Լիոնի Mille et un mondes ընկերակցութեան եւ Փարիզի Արելեյեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկին համագործակցութեամբ: «Չարմանագան» ճամբարը վաւերացուած է Ֆրանսայի Երիտասարդութեան եւ մարզանքներու նախարարութեան կողմէ:*